



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____ » _____ 2020 թ.

«Փաստինֆո» գործակալության լրագրող
Սոնա Գևորգյանին
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 0002, Մաշտոցի 24,1-ին հարկ
էլ. փոստ՝ info@pastinfo.am

Ի պատասխան Զեր 23.12.2019թ.-ի թիվ 82-Ա-19 գրությանը

Հարգելի տիկին Գևորգյան

2019 թվականի պետական բյուջեով ՀՀ Լոռու մարզպետարանին «Պարզևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված է 93190.5 հազ. դրամ: Նշված գումարից առաջին եռամսյակում հատուկ առաջադրանքները և աշխատանքային պարտականությունները բարեխիղճ կատարելու համար աշխատակազմի աշխատակիցները պարզևատրվել են ապրիլ ամսին: Որից հետո մայիս ամսից սկսած վճարումները կատարվել են յուրաքանչյուր ամիս՝ բյուջեով նախատեսված գումարներին համապատասխան:

Պարզևատրման չափը կազմել է հիմնականում աշխատողների դրույքաչափի 20-30 տոկոսի սահմաններում՝ հաշվի են առնվել նրանց աշխատանքային ծանրաբեռնվածությունը և տրված հանձնարարականների կատարման արդյունավետությունը: Պարզևատրվել են մարզպետարանի բոլոր աշխատակիցները, թվաքանակը պարբերաբար փոփոխվել է և կազմում է 127-135 աշխատակից:

2019 թվականին պետական բյուջեից ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացված «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարզևատրում» հոդվածով նախատեսված գումարների հաշվին մարզպետարանի քաղաքացիական ծառայողները համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի կիսամյակի կատարողականների արդյունքների հիման վրա պարզևատրվել են նաև հունվար և հուլիս ամիսները: Վերը նշված հոդվածով կատարված ծախսը կազմում է 36890.7 հազ. դրամ: Հունվարին պարզևատրվել է 98 աշխատակից, հուլիսին՝ 110 աշխատակից: Պարզևատրման չափը կապված կիսամյակի կատարողականի գնահատման տատանվում է դրույքաչափի 60-85 տոկոսի սահմաններում:

Աշխատավարձի տնտեսված միջոցների հաշվին տարեվերջին թվով 132 աշխատակիցների տրամադրվել է 16954.0 հազ. դրամի պարզևատրում՝ աշխատավարձի

50-70 տոկոսի սահմաններում: Վերը նշված 16954.0 հազ. դրամից տրվել է պարգևատրում նաև մարզպետին, մարզպետի տեղակալին և գլխավոր քարտուղարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, որոնց մեջ մտնում է նաև պարգևատրման գումարները, աշխատողների անձնական տվյալներ են և ենթակա չեն հրապարակման: Իսկ ինչ վերաբերվում է մարզպետին, փոխմարզպետին և գլխավոր քարտուղարին վճարված պարգևատրման չափի մասին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ վերը նշված պաշտոնատար անձինք ներկայացնում են գույքի և եկամուտների հայտարարագիր, ուստի վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրերից:

Մարզպետարանի աշխատակիցների կողմից 2019թ. դեկտեմբերի 28-ին կազմակերպվել է ամանորյա հավաքույթ, որի համար պետական բյուջեից ծախսեր չեն կատարվել:

Մարզպետարանի աշխատակիցներին նյութական օգնություններ տարվա ընթացքում չեն տրամադրվել:

Հարգանքով՝

Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆ